

## ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարությունը (այսուհետ՝ Նախարարություն) հայտարարում է Նախարարությունում փորձագետ ներգրավելու մասին

Երկաթուղային, ջրային և օդային տրանսպորտի քաղաքականության վարչության փորձագետ Աշխատանքների համառոտ նկարագրությունը՝

ջրային և օդային տրանսպորտի բնագավառում Եվրասիական տնտեսական միությանը, Հայաստանի Հանրապետության անդամակցության հետ կապված փաստաթղթերի՝ առաջարկությունների, եզրակացությունների, տեղեկանքների, որոշումների, իրավական ակտերի նախագծերի նախապատրաստում.

**Փորձագետ ներգրավելու ժամկետը՝** Մինչև մեկ տարի:

**Փորձագետի պարտականությունները՝**

1. Բարեխղճորեն կատարել աշխատանքային պայմանագրով ստանձնած աշխատանքները:
2. Պահպանել համապատասխան մարմնում սահմանված ներքին կարգապահական կանոնները, աշխատանքային կարգապահությունը:
3. Պահպանել աշխատանքի պաշտպանության և անվտանգության ապահովման միջոցները:
4. Իրականացնել աշխատանքային օրենսդրությամբ, «Հանրային ծառայության մասին» օրենքով և աշխատանքային պայմանագրով իրեն վերապահված այլ պարտականությունները:

**Փորձագետին ներկայացվող պահանջները՝**

- 1) բարձրագույն կրթություն
- 2) հանրային ծառայության հինգ տարվա ստաժ կամ հինգ տարվա մասնագիտական աշխատանքային ստաժ.
- 3) իր լիազորությունների հետ կապված անհրաժեշտ իրավական ակտերի իմացություն, տարբեր իրավիճակներում կողմնորոշվելու ունակություն.
- 4) հաշվետվությունների, եզրակացությունների կազմման, վերլուծությունների կատարման փորձ.
- 5) անհրաժեշտ տեղեկատվության տիրապետում.
- 6) ռուսերեն լեզվի ազատ տիրապետում.
- 7) համակարգչով և ժամանակակից այլ միջոցներով աշխատելու ունակություն:

**Դիմումների ընդունման վերջին ժամկետն է՝** 22.08.2019թ.

**Աշխատանքի վայրը՝** ք. Երևան, Հանրապետության հրապարակ, Կառավարական տուն 3  
**հեռ.** 010-511-355, 010-511-357, **Էլ. հասցե՝** <http://mtad.am>

**Չի թույլատրվում** հավակնորդի հետ պայմանագիր կնքել, եթե տվյալ անձը պաշտոնից ազատվել կամ տվյալ անձի ծառայությունը վերջին մեկ տարվա ընթացքում դադարեցվել է կարգապահական տույժ կիառելու, օրենքով սահմանված փորձաշրջանը չանցնելու, օրենքի խախտմամբ պաշտոնի նշանակվելու, «Հանրային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված անհամատեղելիության պահանջները չպահպանելու, Հայաստանի Հանրապետության քաղաքացիությունը դադարեցնելու, ուժի մեջ մտած՝ նրա նկատմամբ կայացված մեղադրական դատավճռի դեպքերում, բացառությամբ այն դեպքերի, երբ նշանակվել է տուգանք, ինչպես նաև երկու տարի անընդմեջ իր մեղքով վերապատրաստման անհատական ծրագրով հաստատված կրեդիտները չստանալու դեպքում:

## Պիմող ՀՀ քաղաքացիները պետք է ներկայացնեն հետևյալ փաստաթղթերը՝

- դիմում Նախարարության գլխավոր քարտուղարի անունով (դիմումի ձևը կցվում է),
- հայտարարություն ՀՀ կառավարության 02.08.2018թ. N 878-Ն որոշմամբ հաստատված կարգի 13-րդ կետով նախատեսված սահմանափակումների բացակայության մասին (հայտարարության ձևը կցվում է),
- տվյալ աշխատանքին անցնելու համար մասնագիտական գիտելիքների և աշխատանքային ունակությունների տիրապետման տեսանկյունից ներկայացվող պահանջների բավարարումը հավաստող փաստաթղթերի՝ դիպլոմի /ների/, վկայականի /ների/, աշխատանքային գրքույկի (վերջինիս բացակայության դեպքում անհրաժեշտ է ներկայացնել տեղեկանք/ներ համապատասխան մարմնից/ներից) պատճենները բնօրինակների հետ միասին,
- արական սեռի անձինք՝ նաև զինվորական գրքույկի կամ դրան փոխարինող ժամանակավոր զորակոչային տեղամասից կցագրման վկայականի պատճենները՝ բնօրինակի հետ միասին, կամ համապատասխան տեղեկանք,
- մեկ լուսանկար 3+4 սմ չափսի,
- անձնագրի կամ նույնականացման քարտի պատճենը:

ՀՀ քաղաքացին փաստաթղթերը ներկայացնում է անձամբ:

Փաստաթղթերն ընդունվում են ամեն օր՝ ժամը 9.30-ից մինչև 12.30-ը, բացի շաբաթ և կիրակի օրերից: